«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~Հոդված 217. Գիտական կամ առևտրային նմուշների ժամանակավոր ներմուծումը~~

-

~~1. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով ժամանակավոր ներմուծվող գիտական կամ առևտրային նմուշները ենթակա են պարզեցված կարգով հայտարարագրման՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:~~

~~2. Կառավարությունը կարող է սահմանել այն ապրանքների առավելագույն քանակը և (կամ) առավելագույն արժեքը, որոնք ժամանակավոր ներմուծվում են որպես գիտական կամ առևտրային նմուշներ միևնույն անձի կողմից՝ միանգամյա կամ որոշակի ժամանակահատվածում՝ Միության մաքսային օրենսդրությանը համապատասխան:~~

~~3. Ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ուղեկցվող ուղեբեռում գտնվող, ինչպես նաև փոստային առաքումներով տեղափոխվող գիտական կամ առևտրային նմուշները, որոնց արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը, հայտարարագրվում են պարզեցված կարգով՝ մաքսային հայտարարագրի փոխարեն մաքսային մարմիններին ներկայացնելով գիտական կամ առևտրային նմուշները ստացող կազմակերպության գրավոր դիմում: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:~~

~~4. Գիտական կամ առևտրային նմուշների՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով բաց թողնելու ժամկետը մաքսային հայտարարագրի ընդունման պահից կազմում է չորս ժամ՝ մաքսային հայտարարագրի հետ միաժամանակ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:~~

~~5. Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց ժամանակավոր ներմուծման համար կարող է սահմանվել մինչև մեկ աշխատանքային օր բաց թողնելու ժամկետ:~~

Հոդված 217. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների ժամանակավոր ներմուծումը

1. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ֆիլմարտադրության կամ կինոփառատոներում և կինոարվեստի այլ միջոցառումներում ֆիլմի ցուցադրման նպատակով ժամանակավոր ներմուծվող գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ենթակա են պարզեցված կարգով հայտարարագրման՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Կառավարությունը կարող է սահմանել այն ապրանքների առավելագույն քանակը և (կամ) առավելագույն արժեքը, որոնք ժամանակավոր ներմուծվում են որպես գիտական կամ առևտրային նմուշներ, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքներ միևնույն անձի կողմից՝ միանգամյա կամ որոշակի ժամանակահատվածում՝ Միության մաքսային օրենսդրությանը համապատասխան:

3. Ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ուղեկցվող ուղեբեռում գտնվող, ինչպես նաև փոստային առաքումներով տեղափոխվող գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները, որոնց արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը, հայտարարագրվում են պարզեցված կարգով՝ մաքսային հայտարարագրի փոխարեն մաքսային մարմիններին ներկայացնելով գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ստացող կազմակերպության գրավոր դիմում: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:

4. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով բաց թողնելու ժամկետը մաքսային հայտարարագրի ընդունման պահից կազմում է չորս ժամ՝ մաքսային հայտարարագրի հետ միաժամանակ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:

5. Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց ժամանակավոր ներմուծման համար կարող է սահմանվել մինչև մեկ աշխատանքային օր բաց թողնելու ժամկետ:

~~**Հոդված 221. Գիտական կամ առևտրային նմուշների ժամանակավոր արտահանումը**~~

~~1. Գիտական կամ առևտրային նմուշները, որոնք ժամանակավոր արտահանվում են Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս՝ փորձարկումների, հետազոտությունների, ստուգումների ենթարկելու կամ նման գործողությունների իրականացման ընթացքում օգտագործելու համար, հայտարարագրվում են մաքսային հայտարարագրման պարզեցված կարգով՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:~~

~~2. Ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ, ինչպես նաև փոստային առաքումներով Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս ժամանակավոր արտահանվող գիտական կամ առևտրային նմուշները հայտարարատուի ցանկությամբ կարող են հայտարարագրվել պարզեցված կարգով՝ գիտական կամ առևտրային նմուշները ուղարկող կազմակերպության~~

~~գրավոր դիմումը որպես մաքսային հայտարարագիր ներկայացնելով: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:~~

~~3. Գիտական կամ առևտրային նմուշները «Ժամանակավոր արտահանման» ընթացակարգով բաց են թողնվում մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ չորս ժամվա ընթացքում:~~

~~4. Մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց բաց թողնման ժամկետը կարող է կազմել մինչև մեկ աշխատանքային օր:~~

Հոդված 221. Գիտական կամ առևտրային նմուշների, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքների ժամանակավոր արտահանումը

1. Գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները, որոնք ժամանակավոր արտահանվում են Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս՝ փորձարկումների, հետազոտությունների, ստուգումների ենթարկելու, ֆիլմարտադրության կամ կինոփառատոներում և կինոարվեստի այլ միջոցառումներում ֆիլմի ցուցադրման կամ նման գործողությունների իրականացման ընթացքում օգտագործելու նպատակով հայտարարագրվում են մաքսային հայտարարագրման պարզեցված կարգով՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ, ինչպես նաև փոստային առաքումներով Հայաստանի Հանրապետությունից Միության սահմաններից դուրս ժամանակավոր արտահանվող գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները հայտարարատուի ցանկությամբ կարող են հայտարարագրվել պարզեցված կարգով՝ գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները ուղարկող կազմակերպության գրավոր դիմումը որպես մաքսային հայտարարագիր ներկայացնելով: Սույն մասում նշված դիմումի ձևը սահմանում է կոմիտեն:

3. Գիտական կամ առևտրային նմուշները, ֆիլմարտադրության կամ ֆիլմի ցուցադրման հետ կապված ապրանքները «Ժամանակավոր արտահանման» ընթացակարգով բաց են թողնվում մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ չորս ժամվա ընթացքում:

4. Մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով Կառավարության կողմից կարող է սահմանվել ապրանքների ցանկ, որոնց բաց թողնման ժամկետը կարող է կազմել մինչև մեկ աշխատանքային օր: